ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

27 հոկտեմբերի 2021թ. թիվ 1481

Ա.ԳՈՒԼԱՆՅԱՆԻՆ, Դ.ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ, Ն.ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ,
Վ.ՎԱՆՅԱՆԻՆ ԵՎ Լ.ՊԱՊՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2021 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 05/114.3/08256-2021 գրությունը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետ Աննա Գուլանյանին, քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Վահան Վանյանին, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ Լուսինե Պապյանին, հողաշինության և հողօգտագործման բաժնի ավագ մասնագետներ Դավիթ Ստեփանյանին և Նազար Մանուկյանին ս/թ նոյեմբերի 1-ից 3-ը՝ երեք օրով գործուղել ք.Երևան՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիա՝ «Աշխատանքային օրենսգիրք» թեմայով վերապատրաստում անցնելու համար:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

27/10/2021

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 27
ք.Վանաձոր